ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2026թ. Ն ՄՈ/466 - Ա
ք. Արմավիր

«ԱՐԳԻՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարինե Մարկոսյանի 2026 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մարկոսյանին տրամադրել 2025-2026 թվականների ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2026 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 28-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Մարկոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Քաջիկ Այվազյանին:
3. Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Քաջիկ

Այվազյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 28-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Նարինե Մարկոսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 31-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ